Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 10-ի N 177-Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԿԽԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ ՀԿԽԸ-ի շահառուներին մատուցվող ծառայությունների բարելավված միջավայրի ստեղծման նպատակով
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ), Ավստրիական կարմիր խաչ, Իտալական կարմիր խաչ, Իսլանդական կարմիր խաչ, Իսպանական կարմիր խաչ, Գերմանական կարմիր խաչ, ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	քաղ. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Պարոնյան 21/1, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	25 000 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայկական կարմիր խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական, առաջին օգնության, բնակչության տեղաշարժի, երիտասարդական ուղղությունների և այլ ծրագրերի շրջանակներում ընդգրկված շահառուները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.08.2018 թ.-31.10.2018 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայկական կարմիր խաչի ընկերության 1-ին հարկի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված է 01.08.2018 թ.-31.10.2018 թ. ժամանակահատված և 25 000 000 դրամ ֆինանսական միջոցներ:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայկական կարմիր խաչի ընկերության 1-ին հարկի ծառայությունների մատուցման կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ, որի համար նախատեսված են 25 000 000 դրամ ֆինանսական միջոցներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: Վերանորոգման աշխատանքները ՀԿԽԸ-ի կողմից. մշտական հսկվելու են, նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ